ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 4
ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/1 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

Ք. Երևան **«9» հունվարի 2024թ.**
ժամը՝ 11:30

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«29» նոյեմբերի 2023թ. թիվ 894 և «01» դեկտեմբերի 2023թ. թիվ 894** հրամաններով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **«ՀՀ Արարատի մարզի Ջրահովիտ բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների** ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/1** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Էմանուել Իվանյան՝ Հանձնաժողովի նիստի նախագահ
Սերգեյ Հարությունյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Աշոտ Սահակյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Գայանե Քարիմյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Մետաքսյա Եղիազարյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Նարեկ Աղաջանյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ

Հանձնաժողովը, հիմքում ունենալով Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը և ներկայացված փաստաթղթերը, արձանագրեց, որ՝

1. Տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

1.1 «Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Ալյանս» ՍՊԸ Կոնսորցիումի և Էլշին ՍՊԸ և Էլա Շին ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակիցներ) կողմից ներկայացված հայտերը՝ կից փաստաթղթերով, ենթակա են հետագա գնահատման:

2. Տեղեկություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին՝ տառերով և թվերով արտահայտված.

Չափաբաժին 1

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Հայտի ապահովման առկայությունը (առկա է/ առկա չէ)
1	Կապավոր ՍՊԸ և Գրանդ Ալյանս ՍՊԸ Կոնսորցիում	1,475,000,000 Մեկ միլարդ չորս հարյուր յոթանասունհինգ միլիոն	295,000,000 Երկու հարյուր իննսունհինգ միլիոն	1,770,000,000 Մեկ միլիարդ յոթ հարյուր յոթանասուն միլիոն	առկա է
2	Էլշին ՍՊԸ և Էլա Շին ՍՊԸ	1,914,627,056 Մեկ միլիարդ ինը հարյուր տասնչորս միլիոն վեց հարյուր քսանյոթ հազար հիսունվեց	382,925,411 երեք հարյուր ութսուներկու միլիոն ինը հարյուր քսանհինգ հազար չորս հարյուր տասնմեկ	2,297,552,467 Երկու միլիարդ երկու հարյուր իննսունյոթ միլիոն հինգ հարյուր հիսուներկու հազար չորս հարյուր վաթսունյոթ	առկա է

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները (Հավելված 2) համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտի ապահովումներում արտացոլված գումարները համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3. Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովն արձանագրեց, որ՝

3.1 **Էլշին ՍՊԸ և Էլա Շին ՍՊԸ**-ի՝ նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալները ներկայացված են հրավերով սահմանված ձևով, կազմված և ստորագրված են մասնակցի անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձի կողմից, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ. հոկտեմբերի 26-ի N 1869-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ ստանալու իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը մասնակիցների՝ նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ:

3.2 Համաձայն մրցույթի պահանջների՝ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ներառել են նաև հայտի ապահովումներ՝ բանկային երաշխիքների ձևով, և նշված երաշխիքները Մասնակիցների՝ **«Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Ալյանս» ՍՊԸ կոնսորցիումի և Էլշին ՍՊԸ և Էլա Շին ՍՊԸ-ի** կողմից ներկայացվել են լուսապատճենված տարբերակով:

3.3 **«Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Ալյանս» ՍՊԸ կոնսորցիումի** մասնակից ընկերությունները ներկայանում են որպես Արցախի Հանրապետությունում գրանցված ընկերություններ, իսկ բանկային երաշխիքը տրված է Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից,

միևնույն ժամանակ, բանկային երաշխիքը չի պարունակում ընկերություններն անհատականացնող տվյալներ (ՀՎՀՀ, պետ. գրանցման համար և այլն):

3.4 Հանձնաժողովը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, որոշեց ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ստուգելու **«Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Ալյանս» ՍՊԸ կոնսորցիումի և Էլշին ՍՊԸ և Էլա Շին ՍՊԸ-ի** կողմից ներկայացված երաշխիքի թողարկման իսկությունը:

4. Հանձնաժողովը որոշեց.

4.1 Սույն արձանագրության 3-րդ բաժնի 3.1-ին կետի հիմքով դիմել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե՝ **Էլշին ՍՊԸ և Էլա Շին ՍՊԸ**-ի՝ նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալների իսկությունը ստուգելու նպատակով:

4.2 Սույն արձանագրության 3-րդ բաժնի 3.2-րդ կետի հիմքով դիմել երաշխավոր բանկին՝ պարզելու Մասնակիցների բանկային երաշխիքների իսկությունը:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է 4-րդ կետում նշված փաստաթղթերը Հանձնաժողովին հանձնելուն հաջորդող 5-րդ աշխատանքային օրը, ժամը 11:30-ին:

Հանձնաժողովի

նախագահ՝

Էմանուել Իվանյան _____

անդամներ՝

Սերգեյ Հարությունյան _____

Աշոտ Սահակյան _____

Գայանե Քարիմյան _____

Մետաքսյա Եղիազարյան _____

Նարեկ Աղաջանյան _____

քարտուղար՝

Լիլիթ Սեդրակյան _____